Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 26-ի N2016 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 21-ի N561-Ա – N568-Ա, 2022 թվականի հուլիսի 25-ի N569-Ա, N573-Ա, 2022 թվականի հուլիսի 26-ի N574-Ա - N579-Ա, 2022 թվականի հուլիսի 28-ի N580-Ա - N582-Ա որոշումների վերաբերյալ.

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N561-Ա և N562-Ա որոշումներով տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթի պահանջին:

2. N563-Ա, N565-Ա, N567-Ա, N569-Ա, N574-Ա, N575-Ա, N579-Ա և N581-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներին:

3. N564-Ա որոշման վերնագրում և բովանդակությունում հողամասի կադաստրային ծածկագիրը տարբեր է գրառված:

4. N568-Ա որոշման վերնագիրը և հղումները չեն համապատասխանում որոշման բովանդակությանը:

5. N570-Ա, N571-Ա, N572-Ա և N573-Ա որոշումների նախաբաններում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված, բացի այդ անհրաժեշտ է հղում կատարել նաև ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու համապատասխան որոշմանը:

6. N576-Ա որոշման նախաբանում հղումը թերի է կատարված:

7. N577-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

8. N580-Ա որոշման վերնագիրը և հղումները չեն համապատասխանում որոշման բովանդակությանը:

9. N582-Ա որոշման բովանդակությունում «որոշման մեջ» բառերից հետո անհրաժեշտ է գրառել միայն հետևյալ բառերը և թվերը՝ ««12/5» թիվը փոխարինել «12/56» թվով»:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
28 սեպտեմբերի 2022թ